ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեանը նշանակալից դեր է ունեցել Հայ եկեղեցու, մանկավարժութեան եւ հայագիտութեան պատմութեան մէջ՝ յատկապէս XIX-XX դարերի շրջադարձային ժամանակահատուածում։ Նա յայտնի է իր աստուածաբանական գիտելիքներով, ազգային-եկեղեցական հարցերում իր սկզբունքային դիրքորոշմամբ եւ հայագիտական հետազօտութիւններով, որոնք իրականացրել է հոգեւոր գործունէութեանը զուգընթաց։ Որպէս եկեղեցական գործիչ՝ նա գործուն մասնակցութիւն է ունեցել ազգային խնդիրների քննարկմանը, պաշտպանել է հայ եկեղեցու իրաւունքները եւ կարեւորել է հոգեւոր դաստիարակութեան դերն ու նշանակութիւնը թէ՛ հայրենիքում եւ թէ՛ նրա սահմաններից դուրս։

Հայագիտութեան զարգացման գործում աւանդ ունեցած հայ տեղագիր Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեանը բազմաբովանդակ գործունէութիւն է ծաւալել Արեւելեան Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում՝ զբաղեցնելով պատասխանատու մի շարք պաշտօններ։ Ուսումնասիրութեան տեսանկիւնից կարեւոր է հոգեւորականի տեղագրական, յատկապէս՝ վիմագրագիտական ժառանգութիւնը. նրա շնորհիւ մեզ են հասել վիմագրեր, որոնք վերացել կամ եղծուել են բնական ու մարդկային գործօնների արդիւնքում։

Մեր նպատակն է մի կողմից ներկայացնել Ա. Սեդրակեանի կենսագրական մանրամասները, միւս կողմից՝ վիմագրագիտական գործունէութիւնը՝ յենուելով նրա տպագիր եւ անտիպ ուսումնասիրութիւնների վրայ[1]։

Տեղագիր, բանասէր, պատմաբան, թարգմանիչ, Էջմիածնի միաբանութեան անդամ Արիստակէս Սեդրակի Մելիք-Առաքելեանը ծնուել է 1844 թ. Օգոստոսի 23-ին Խալֆալու գիւղում։ Երեւանի նահանգի Սուրմալուի գաւառում գտնուող այս բնակավայրը յայտնի էր նաեւ Գալֆալու, Ղալֆալի, Ղալֆալու տարբերակներով։ XX դարասկզբին այն ունէր 100 տուն՝ 1089 հայ բնակչով, որոնք, ցաւօք, 1920-ական թթ. տեղահանուել են[2]։

Անյայտ է Մելիք-Առաքելեան ազգանուան ծագումը, փոխարէնը՝ Արիստակէսը հօր՝ Սեդրակի անունով կրում է Սեդրակեան ազգանունը։ Նախնական կրթութիւնը նա ստացել է Էջմիածնի Ժառանգաւորաց դպրոցում, իսկ 1861 թ. Եղիազար Արքեպիսկոպոսի կողմից ձեռնադրուել է սարկաւագ՝ մերժելով «աշխարհը եւ անձնական բարիքները, հայրենի եկեղեցուն ծառայելու համար»[3]։ 1863 թ. նա նշանակուել է Մոսկուայի հայոց

---

[1] **Հայաստանի ազգային արխիւ** (այսուհետ՝ ՀԱԱ), ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1623, Էջմիածնի սինոդի անդամ Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեանի ծառայութեան ցուցակ, 1861-1891, 6 թերթ։ **ՀԱԱ**, ցուցակ 2, գործ 1658, Աստրախանի հայոց թեմի առաջնորդ Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեանի ծառայութեան ցուցակ, 1898-1906, 13 թերթ (այսուհետ՝ գործ 1658)։

[2] Տե՛ս **Յակոբեան Թ. Խ.**, **Մելիք-Բախշեան Ստ. Տ.**, **Բարսեղեան Գ. Խ.**, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, (այսուհետ՝ ՀՀՇՏԲ) հ. 2, Երեւան, Երեւանի համալսարանի հրատ., 1988, էջ 628։

[3] **Տէր-Մինասեան Վրդ. Երուանդ**, Արիստակէս Սեդրակեան, «Արարատ», № Ա, Վաղարշապատ, 1907, էջ 51։

եկեղեցու սպասաւոր։ Յաւօք, այդ շրջանի նրա գործունէութեան մասին տեղեկութիւնները սուղ են։

1865 թ. վերադառնալով էջմիածին՝ Ա. Սեդրակեանը ձեռնադրուել է կուսակրօն քահանայ եւ 1866 թ. ստացել վարդապետութեան աստիճան։ 1867 թ. Հոկտեմբերի 20-ին նշանակուել է Ղարաբաղի թեմի առաջնորդի պաշտօնակատար, իսկ երկու շաբաթ անց՝ Նոյեմբերի 4-ին, Սինոդի կողմից՝ Տաթեւի առաջնորդ՝ պաշտօնավարելով մինչեւ 1869 թ. Ապրիլի 6-ը։

1869 թ. Ա. Սեդրակեանը եղել է Երնջակ գաւառի Ապրակունիս գիւղի մօտ գտնուող Ս. Կարապետ վանքի հոգեւոր առաջնորդ։ Պատմական Երնջակ գաւառն ընդգրկում է ներկայիս Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան Ջուլֆայի շրջանը, Արաքս գետի ձախակողմեան ափը։ Որպէս Սիւնեաց նահանգի համանուն գաւառ՝ այն յիշատակւում է VII դարից։ Նշանաւոր Ս. Կարապետի վանքը (XIV-XVIII դդ., յայտնի է նաեւ Աբրակունիսի կամ Ապրակունիքի վանք անուամբ) համարւում է միջնադարեան Հայաստանի հոգեւոր եւ մշակութային նշանաւոր կեդրոններից մէկը. այն եղել է ուխտատեղի թէ՛ հայերի եւ թէ՛ մահմեդականների համար[4]։

Վանական համալիրի մէջ մտնում են բազիլիկ, խաչաձեւ յօրինուածքով կառուցուած Ս. Կարապետ եկեղեցին, զանգակատունը, Ս. Ստեփաննոս մատուռը (կառուցուած՝ 1653-1656 թթ.), վանական երկյարկանի դպրոցը (այստեղ ուսուցչութեամբ են զբաղուել ժամանակի խոշոր մտածողներ Յովհան Որոտնեցին եւ Գրիգոր Տաթեւացին), մատենադարանը, պարտէզը, Կաթան սրբազան աղբիւրը[5], խաչքարերը, շրջապարիսպը, առաջնորդարանը, հիւրատունը եւ օժանդակ այլ շինութիւնները[6]։

Հասկանալով կրթութեան եւ դպրութեան կարեւորութիւնը՝ 1870 թ. Ա. Սեդրակեանը ձեռնամուխ է լինում վանական դպրոցի բացմանը, որը կրելու էր «Գէորգեան վանական դպրոց» անունը՝ ի պատիւ Գէորգ Դ Կաթողիկոսի (1866-1882)։ Իր այս նախաձեռնութեան համար կաթողիկոսը նրան անուանում էր «ուսումնասէր եռանդով եւ բարեիղձ ձգտումով անձ»[7]։ Սակայն ինչ-ինչ պատճառներով դպրոցը չի բացւում, աւելին՝ 1874-1876 թթ. Գէորգ Դ Կաթողիկոսի նախաձեռնութեամբ հիմնադրւում է էջմիածնի Գէորգեան ճեմարանը, եւ որպէս ժամանակի ուսեալ ու գիտուն հոգեւորական՝ 1874 թ. Սեպտեմբերի 5-ին Ա. Սեդրակեանը նշանակւում է նորաբաց ճեմարանի հայոց պատմութեան ուսուցիչ՝ ծաւալելով մանկավարժական ակտիւ գործունէութիւն։ Յաւելենք, որ 1891-1893 թթ. նա եղել է Գէորգեան ճեմարանի տեսուչը։

1875 թ. Օգոստոսին Ա. Սեդրակեանը նշանակուել է Ներսիսեան դպրոցի հայոց լեզուի ուսուցիչ։ 1876 թ. Յուլիսի 23-ին նրան առաջարկուել է Ղարաբաղի թեմի առաջնորդի պաշտօնը, որտեղ նա լուծել է մի շարք կարեւոր խնդիրներ։ 1881 թ. Մարտի 3-ին Ա. Սեդրակեանը նշանակուել է էջմիածնի Ս. Գայիանէ վանքի վանահայր, իսկ 1882 թ. Մայիսի 9-ին՝ Գէորգ Դ Կաթողիկոսի մահից մի քանի օր առաջ, ձեռնադրուել է եպիս-

---

[4] Աւանդութեան համաձայն Ս. Կարապետ եկեղեցու աջակողմեան խորանի օրհնուած հողով բուժում էին օձի խայթոցը։ Տե՛ս **ՀՀՇՏՔ**, հ. I, Երեւան, Երեւանի համալսարանի հրատ., 1986, էջ 313։

[5] Աղբիւրը ժամանակին առատ ջուր է ունեցել, բայց ինչ-որ մէկը, անարգելով աղբիւրի զօրութիւնը, մեղմ է գործել, որի հետեւանքով էլ աղբիւրի ջուրը սկսել է կաթկթել։ Տե՛ս **Էփրիկեան Հ.**, Պատկերազարդ Բնաշխարհիկ բառարան, հատոր առաջին, գիրք Ա, Վենետիկ, 1903, էջ 721։

[6] **Սմբատեանց Մ.**, Նկարագիր Ս. Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, Տփղիս, 1904, էջ 20-21։

[7] Նոյն տեղում, էջ 27։

կոպոս[8]։

1883 թ. Յունուարի 7-ին Արիստակէս Եպիսկոպոսը ստանձնում է Վրաստանի եւ Իմերեթիայի թեմի հայոց առաջնորդի պատասխանատու պաշտօնը, որը վարում է մինչեւ 1889 թ. Նոյեմբերի 10-ը։ Այդ տարիներին նա հիմնում է քահանաների ապահովութեան գանձարանը եւ հոգեւոր գործուն քարոզչութիւն է ծաւալում թեմի բնակավայրերում։ Սակայն Մակար Ա Թեղուտցի Կաթողիկոսի (1886-1891) հետ տարաձայնութիւններ ունենալու պատճառով նրան հեռացնում են թեմից[9]։ Հայ հասարակութիւնը սիրում էր նրան՝ համարելով կարգապահ եւ ճշտապահ հոգեւորական, քանի որ նա կարգ ու կանոն էր սովորեցնում իր շրջապատին՝ առաջինն ինքն օրինակ ծառայելով[10]։

1891 թ. Սեպտեմբերի 19-ին Ա. Սեդրակեանը դառնում է Սինոդի անդամ[11], իսկ 1893-1894 թթ.՝ Վաղարշապատի Ս. Շողակաթ եկեղեցու վանահայրը։ Քանի որ նա հակասութիւններ ունէր կաթողիկոս Մկրտիչ Խրիմեանի (1891-1907) հետ, 1895-1905 թթ. նրան կարգում են Աստրախանի հայոց թեմի առաջնորդ՝ հեռու պահելով էջմիածնից[12]։ Բանն այն էր, որ Ա. Սեդրակեանն ունէր մի խումբ համակիրներ ռուսահայերի մէջ, որոնց կոչում էին մշակականներ։ Նրանք գործում էին Գրիգոր Արծրունու եւ «Մշակ» թերթի միջոցով՝ սատարելով Սեդրակեանին[13]։ Այդ տարիներին նա դառնութեամբ էր տեսնում հայոց եկեղեցու անփառունակ վիճակը, եկեղեցական կարգ ու կանոնի կազմալուծումը[14]։

Հակասութիւններն այն աստիճան են սրում, որ նոյնիսկ փորձում են սպանել Ա. Սեդրակեանին։ Այս առումով ուշագրաւ է արխիւային նամակներից մէկը, որտեղ նամակագիրը՝ Նիկողոս Ամիրեանը, զգուշացնում է Ա. Սեդրակեանին, որ Թիֆլիսից Քարուանսարայ (ներկայիս՝ Իջեւան) ճանապարհին իր եւ Երեմիա Եպիսկոպոս Գալստեանի դէմ մահափորձ է ծրագրւում՝ դեղով կամ ատրճանակով, որպէսզի միաբանութիւնում խաղաղութիւն հաստատուի[15]։ Հաւանաբար նամակի բովանդակութիւնը կեղծ էր, եւ այն նպատակ ունէր պարզապէս վախեցնել եպիսկոպոսին։

Արդէն Մակար Ա կաթողիկոսի մահից յետոյ (1891 թ.) Երեմիա Եպիսկոպոս Գալըստեանի հետ Ա. Սեդրակեանը փորձում էր պայքարել կաթողիկոսական աթոռի համար, բայց, ինչպէս վկայում է Օրմանեանը, «որովհետեւ երկուքը միանգամայն չէին կրնար կաթողիկոս հռչակուիլ, համերաշխ գործակցութեան քօղին ներքեւ փոխադարձաբար զիրար խաբելու նենգաւոր դերը կը վարէին»[16]։ Ենթադրում ենք, որ Մայր Աթոռում Ա. Սեդրակեանին համարել են ցարական կառավարութեան գործակալ, ռուսամէտ, որի հետեւանքով էլ փորձել են հնարաւորինս հեռու պահել Ամենայն հայոց հոգեւոր կեդրոնից։

Ա. Սեդրակեանը մեծ դեր է ունեցել հայ գրականութեան եւ պատմութեան ուսում-

---

[8] **Օրմանեան Մ.**, Ազգապատում, հ. Գ, Երեւան, 2001, (այսուհետ՝ Ազգապատում), էջ 5112։

[9] Ազգապատում, էջ 5342։

[10] **Տէր-Մինասեան Վրդ. Երուանդ**, Արիստակէս Սեդրակեան, «Արարատ», № Ա, Վաղարշապատ, 1907, էջ 52։

[11] Սինոդը բացուել է 1837 թ. Փետրուարի 22-ին Յովհաննես Ը Կարբեցի 1831-1842 Կաթողիկոսի կողմից։ Գործել է մինչեւ 1917 թ.։ Տե՛ս **Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան**, Երեւան, 2002, էջ 907-908։

[12] Ազգապատում, էջ 5375։

[13] Ազգապատում, էջ 5378։

[14] **Տէր-Մինասեան Վրդ. Երուանդ**, Արիստակէս Սեդրակեան, «Արարատ», № Ա, Վաղարշապատ, 1907, էջ 53։

[15] **ՀԱԱ**, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 158, Նամակներ, էջ 43-47։

[16] Ազգապատում, էջ 5373։

նասիրութեան գործում. «Ինչ որ կարողացել է, այն է արել նա. եւ իւր ստացած ուսման համեմատութեամբ բաւական արժէքաւոր են նրա երկերը»[17]։ Նա ուսումնասիրել եւ նկարագրել է հայոց պատմութեանն ու մշակոյթին վերաբերող բազմաթիւ յիշատակարաններ, հայկական բանահիւսութեան նմուշներ (օրինակ՝ տեղագրական, վիմագրական «Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակու»՝ 1872 թ., «Քնար մշեցւոց եւ վանեցւոց»՝ 1874 թ.), քննութեան է առել XIX դարի առաջին կէսի հայագիտութեան եւ լուսաւորչական շարժման պատմութիւնը, հրատարակել է «Յարութիւն Արարատեանի կեղծիքը», իսկ 1894 թ.՝ «Յովհաննէս Եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը»։ Նրա աշխատութիւնները նուիրուած են հայ եկեղեցու պատմութեանն ու դաւանաբանութեանը։ Յիշատակութեան են արժանի 1904 թ. Ս. Փեթերսպուրկում հրատարակուած «Հայաստանեայց եկեղեցու պատկերագրութիւնը» ծաւալուն աշխատութեան առաջին մասը (երկրորդ մասը լոյս չի տեսել. այն ձեռագիր վիճակում պահւում է Հայաստանի ազգային արխիւում[18]), ինչպէս նաեւ «Ամուսնական խնդիրներ» (1891 թ.) եւ «Քահանայական խնդիրներ» (1900 թ.) աշխատութիւնները, թարգմանութիւնները, անտիպ գործերն ու նամակները։ Նամակներից մէկում կարդում ենք. «Կան գրքեր, որոնց պարունակութիւնը պատճառ է ընթերցողին ներքին բաւականութեան հետ խորին թախիծ, այդպիսի տպաւորութիւն թողեց ինձ վերայ Ձեր «Քահանայական խնդիրները»»[19]։

Մեր ուսումնասիրութեան համար առաւել կարեւոր են նրա հաւաքած տպագիր եւ անտիպ վիմագրերը, որոնց թիւն այնքան էլ մեծ չէ՝ մօտ 100 միաւոր։ Նշենք, որ արխիւային նիւթերում մեզ յաջողուեց գտնել անտիպ երկու վիմագիր Արագածոտնի մարզի Բիւրական գիւղից, որոնք, ցաւօք, մեզ չեն հասել։ Յայտնի է, որ Բիւրականը եղել է կաթողիկոսական ամառանոց, որտեղ պարբերաբար շինարարական աշխատանքներ են կատարուել։ Դեռեւս Գէորգ Դ Կաթողիկոսի կողմից կառուցուել է ընդարձակ ամառանոց, որի պատին շինարար կաթողիկոսը թողել է հետեւեալ արձանագրութիւնը. «Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԵՐ ՏԵՐ ԳԷՈՐԳ Դ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԵՑԻ ՇԻՆԵԱՑ ԶԱՅՍ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՄԱՌԱՆՈՑ Ի ԲԻՒՐԱԿԱՆ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1874 ՌՅԻԳ»[20]։

Նա մէկ այլ արձանագրութիւն էլ է գրառել, սակայն չի նշել, թէ գիւղի որ հատուածից. «ՅԻՇԱՏԱԿ Է ՏԷՐ ՊԵՏՐՈՍԻՆ / Ի ԴՈՒՌՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՆ / Ի ԹՈՒԻՆ ՌԾ (1601)»[21]։ *Բիւրական գիւղի պատմական յուշարձանների ցանկում, ցաւօք, Ս. Գրիգոր եկեղեցի կամ մատուռ չի յիշատակւում։ Ենթադրում ենք, որ վիմագիրն այլ վայրից է գրառուած, կամ էլ տուեալ յուշարձանը պարզապէս մեզ չի հասել։*

Արիստակէս Եպիսկոպոսը հոգեւոր ծառայութեան համար արժանացել է մի շարք պարգեւների ու շքանշանների. 1876 թ. ստացել է ծաղկեայ փիլոնով պաշտօնավարելու, 1877 թ.՝ լանջախաչ կրելու իրաւունք, իսկ 1882 թ.՝ պանակէ, որը տրւում է կաթողիկոսի կողմից եպիսկոպոսին եւ խորհրդանշում է եկեղեցու սպասաւորի սէրն ու յարգանքն Աստծոյ հանդէպ։ 1896 թ. նա ստացել է Ս. Վլադիմիրի շքանշան սուլթանի կողմից՝ ի նշան

---

[17] **Տէր-Մինասեան Վրդ. Երուանդ**, Արիստակէս Սեդրակեան, «Արարատ», № Ա, Վաղարշապատ, 1907, էջ 54։

[18] **ՀԱԱ**, ցուցակ 1, գործ 269, Ա. Եպս. Սեդրակեանի «Հայաստանեանց եկեղեցու պատկերագրութիւն» աշխատութիւնը, 1890, 16 թերթ։

[19] **ՀԱԱ**, ցուցակ 1, Գործ 258, Աստրախանի թեմի առաջնորդ Ա. Արք. Սեդրակեանին ուղղուած նամակները՝ յոբելեանեներ կատարելու, գրած աշխատութիւնների, պաշտօններ ստանալու, դպրոցներ բացելու, բարեգործական խնդիրների մասին, 1888-1905, թերթ 23ա։

[20] **ՀԱԱ**, ցուցակ 1, գործ 179, Մեսրոպ Արք. Սմբատեանցին ուղղուած նամակներ, 1875-1914 թթ., թ. 73 ա։

[21] Նշ. աշխ., թ. 75 ա։

Երուսաղէմ կատարած այցի[22]։

Ա. Սեդրակեանը վախճանուել է 1906 թ. Նոյեմբերի 10-ին՝ 61 տարեկան հասակում։ Իրարամերժ փաստերից տեղեկանում ենք, որ նա մահացել է Թիֆլիսում[23] կամ Վաղարշապատում[24]։ Վաղարշապատի տարածքում որեւէ տապանաքար չկայ նրա անունով, սակայն մեզ յայտնի է, որ էջմիածնի միաբանութիւնը Վաղարշապատում կատարել է հոգեհանգստեան կարգ[25], իսկ Թիֆլիսում 1907 թ. Յունիսի 18-ին Մատթէոս Բ Կաթողիկոսի (1907-1910) կողմից բացուել է նրա տապանաքարը[26]։ Հաշուի առնելով այն հանգամանքը, որ Թիֆլիսի հայկական յուշարձանները մեծ վնաս են կրել 1920-30-ական թթ.՝ ներկայումս ոչ մի տեղեկութիւն չկայ նրա տապանաքարի գտնուելու վայրի մասին։

Ա. Սեդրակեանի անտիպ ուսումնասիրութիւնները, անձնական նամակներն ու այլ փաստաթղթերը պահւում են Հայաստանի ազգային արխիւի Կաթողիկոսական դիւանի թիւ 57 ֆոնդի 1 եւ 2 ցուցակներում. նրա անունով առանձին ֆոնդ չի ստեղծուել։ Արխիւային փաստաթղթերում մեծ թիւ են կազմում նրան ուղղուած բազմաբնոյթ նամակները, որոնցում նրանից խնդրում են ոչ միայն դրամական օգնութիւն, այլեւ միջնորդութիւն՝ հոգեւոր պաշտօնների նշանակելու, աշխատանքի ընդունուելու կամ անգամ զինծառայութիւնից ազատուելու համար։ Նամակագիրները նշում են, որ Ա. Սեդրակեանը լուրջ, սակաւախօս, պարտաճանաչ եւ պատկառանք ներշնչող անձնաւորութիւն էր, թէեւ որոշ հոգեւորականներ թերագնահատում էին նրա գործունէութիւնը։

Ա. Սեդրակեանը թողել է անտիպ յիշատակարաններ, որոնք կարեւոր սկզբնաղբիւր են ժամանակի հայ հասարակական, քաղաքական ու մշակութային կեանքի ուսումնասիրութեան համար։ Լիայոյս ենք, որ տարիների խորքից աւելին կիմանանք հայ երախտաւոր Արիստակէս Եպիսկոպոս Սեդրակեանի հոգեւոր եւ հայագիտական գործունէութեան մասին։ Նրա ազգանպաստ գործունէութիւնն ընթացել է պատմական այնպիսի փուլում, երբ հայ իրականութեան մէջ առաջնային էին ինքնութեան պահպանումը, կրթամշակութային կեանքի վերազարթօնքն ու եկեղեցական ինքնավարութեան ամրապնդումը։

Այս համատեքստում նա հանդէս է եկել ոչ միայն որպէս հոգեւորական, այլեւ գիտական մտածողութեամբ առաջաւոր հայագէտ, որի համար կարեւոր էին հայ եկեղեցու պահպանութիւնը, կրթական գործը, մշակոյթն ու ազգային շահերը։ Նրա գործունէութիւնը կարելի է համարել հայ եկեղեցու պատմութեան եւ հայագիտութեան զարգացման կարեւոր փուլ, որտեղ հոգեւոր ծառայութիւնն ու գիտական որոնումները փոխլրացնում են միմեանց՝ ձեւաւորելով ազգային-եկեղեցական ինքնութեան պահպանման կարեւորագոյն նպատակը։

ՍՈՒՍԱՆՆԱ ԱԴԱՄԵԱՆ

Պատմ. գիտ. թեկ., ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, գիտաշխատող

---

[22] **ՀԱԱ**, ցուցակ 2, գործ 1658, թերթ 2-3։

[23] Մահագոյժ, «**Արարատ**», № Ը-ԺԱ, Վաղարշապատ, 1906, էջ 711։

[24] Սերայդարեան Եպս. Գ., Գաւազանագիրք Վրաստանի հայոց թեմի, «**Էջմիածին**», Թ, Ժ, ԺԱ, 1992, էջ 74-93։

[25] Մահագոյժ, «**Արարատ**», № Ը-ԺԱ, Վաղարշապատ, 1906, էջ 711։

[26] Ազգապատում, էջ 5932։